

Աննա Գ.Ասատրյան  
Արվեստագիտության դոկտոր

## ԱՎԱԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԴԻՄԱՆԿԱՐԻ ՆՐՔԱԳԾԵՐ

Ականավոր օպերային երգչի ծննդյան 100-ամյակի առթիվ\*

Ավագ Պետրոսյանը մեր պարծանքն է:  
Չկա հիմա Ավագ, չկա: Ավագի տեղը թափուր է:

Հովհաննես Չեքիջյան<sup>1</sup>

### Մուտք



Ավագ Պետրոսյանը Տիրիթի դերում (Արշակ Երկրորդ)

Ծիշտ 100 տարի առաջ՝ 1912 թ. օգոստոսի 4-ին, Ալեքսանդրապոլի (ներկայումս՝ Գյումրի) քաղաքային տան հանդիսասրահում առաջին անգամ ներկայացվում էր Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերան: Սարոյի դերերգի կատարման համար Թիֆլիսից հրավիրվել էր Շարա Տալյանը: Այդ օրը դժվար թե ներկաներից որևէ մեկը պատկերացներ, թե օպերայի հեղինակ Արմեն Տիգրանյանի ղեկավարությամբ մի խումբ սիրող երգիչներ մեծ կյանքի ուղեգիր են տալիս մի ստեղծագործության, որը տարիներ անց դառնալու էր հայ երաժշտական թատրոնի զարդերից մեկը: Հետագայում՝ 1935 թվականի մարտի 27-ին, երբ օպերան առաջին անգամ բեմ բարձրացավ Երևանի օպերային թատրոնում, վերստին Շարա Տալյանն էր մարմնավորելու Սարոյի կերպարը<sup>2</sup>:

Սակայն Արմեն Տիգրանյանը խիստ մտա-

Գ (Ժ) քարտե, թիվ 2 (38) ապրիլ-հունիս, 2012

վեմ համահայկական հանդես

\*Յոդվածն ընդունվել է տպագրության 5.05.2012:

1 Ա. Պետրոսյանի անձնական արխիվ:

2 Ներկայացման բեմադրող ռեժիսորն էր Արմեն Գուլակյանը, դիրիժորը՝ Սերգեյ Շաթիրյանը: Անուշի դերերգը կատարեց Յայկանուշ Դանիելյանը:

հոգ էր Սարոյի դերերգի բեմական ճակատագրով. ««Ինչ կլինի հետո, 20-30 տարի անց, երբ Շարան արդեն բեմում չլինի: Թեև իմ օպերան կոչվում է «Անուշ», բայց նրա ողնաշարը Սարոն է, առավել ևս՝ Տալյանի Սարոն: Չէի ցանկանա, որ կյանքից մեր սերնդի հեռանալով «Անուշ» օպերան թառամեր ու թռչներ»<sup>3</sup>:

Ի՞նչ իմանար Ա.Տիգրանյանը, որ «Անուշի» պլեբասանդրապոլյան այդ սիրողական պրեմիերայից ամիսներ առաջ՝ 1912 թ. մարտի 16-ին, ծնվել էր քսաներորդ դարի հայ երգարվեստի հանգուցային ֆիգուրներից մեկը՝ հրաշալի դրամատիկ տենոր (tenore di forza) **Ավագ Գեղամի Պետրոսյանը**<sup>4</sup>:

3 **Амбарцумян П.** В те далекие годы... “Коммунист”, 29 мая, 1981.

4 Ա. Պետրոսյանի մասին տես **Ավագյան Շուշան**, Ավագ Պետրոսյանի ծննդյան 100-ամյակին, «Երաժիշտ», մարտ, 2012, էջ 4: «Անուշ»-ը կիրովականում, «Կայծ», 9 օգոստոսի, 1958: **Արմենյան**, ժողովուրդը մեծարում է իր երգչին, «Սովետական Հայաստան», 30 մարտի, 1983: **Արսենյան Հայկ**, Նրան սիրել են բոլոր Անուշները, «Իրավունք», 16-23 մարտի, 2007: Ավագ Պետրոսյան, «Եթերում է Երևանը», Եր., 8 օգոստոսի, 1971: **Ավագյան Կարինե**, Ավագ Պետրոսյան - 100: Նրա ծայրը տիեզերքից անդին է..., “Armenian times”, Русско-армянская общественно-политическая газета, март, 2012, էջ 14: **Գալոյան Սերգեյ**, Ի վերուստ էր տրված. Ավագ Պետրոսյանի ծննդյան օրը նշեցինք, «Ազգ», 17 մարտի, 2001, էջ 6: **Գասպարյան Ս.**, «Դավիթ Բեկ». Ալ.Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնի նոր բեմադրությունը, «Սովետական Հայաստան», 17 հուլիսի, 1953: **Գուլաշյան Հասմիկ**, Արա Պետրոսյան. «Նրա համար ամենաթանկը ժողովրդի սերն էր», հարցազրույց հայ մեծ երգչի Ավագ Պետրոսյանի որդու՝ դիրիժոր և դաշնակահար Արա Պետրոսյանի հետ, «Վասն հայության», թիվ 9 (72), 30 մարտի, 2003: **Դանիելյան Կարինե**, Բեմը իր տարերքն էր. օպերային արվեստի լեգենդը, «Ժամանակ», Եր., 3 նոյեմբերի, 2001: **Դավթյան Ռոբերտ**, Սիշտ ինձ հետ են, «Սովետական Հայաստան», 29 մայիսի, 1981: **Լևոնյան Տիգրան**, «Դավիթ Բեկը» պայքարի ղողանց է, «Սովետական Հայաստան», 21 մարտի, 1986: **Խալաթյան Լևոն**, Բեմական երջանկություն, «Սովետական Հայաստան», 29 մայիսի, 1981: **Խաչատրյան Հայկ**, **Կակոսյան Արսեն**, Սայաթ-Նովյան մեծ տոնահանդես, «Սովետական Հայաստան», 22 սեպտեմբերի, 1963: **Խաչատրյան Հ.**, Արվեստի վարպետները Ղափանում, «Պղնձի համար», 15 նոյեմբերի, 1957: **Հակոբյան Գոհար**, Անգուզական «Սարոյի» հորեյանը, «Առավոտ», 16 մարտի, 2007: **Հակոբյան Գոհար**, Անկրկնելի «Սարոն» 100 տարեկան է դառնում, «Առավոտ», 14 մարտի, 2012: Հիշարժան տարեթվեր. ամնահ «Սարոյ»-ի Ավագ Պետրոսյանի 95-ամյակը, «Ազգ», 16 մարտի, 2007: **Մակարյան Մարիետա**, Փողոց Ավագ Պետրոսյանի անունով, «Ազգ», 19 հունիսի, 2004: **Մարկոսյան Կարլոս**, Տարեգրության էջերից, «Սովետական Հայաստան», 29 մայիսի, 1981: **Մարկոսյան Կարլոս**, Իսկական գանձարան, «Երեկոյան Երևան», 29 ապրիլի, 1987: **Նշանեան Աննա**, Երգը Յուշերու... Լուս-Անճելըս, 2003, էջ 135-137: **Չամչյան Հր.**, ժողովրդական երգիչը, «Երեկոյան Երևան», 26 մարտի, 1983: **Պապյան Արաբյան**, Բարի գալուստ, «Սոցիալիստական անասնապահություն», 21 օգոստոսի, 1958, էջ 3: **Պլուզյան Կարոսյան**, Երբ Ավագն էր խաղերգուն..., «Հայաստանի Հանրապետություն», 6 նոյեմբերի, 2007: Պետրոսյան Ավագ, Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 9, Եր., 1983, էջ 260-261: **Պետրոսյան Ավագ Գեղամի**, Ով ով է, Հայեր, կենսագրական հանրագիտարան երկու հատորով, հատ. երկրորդ, Եր., 2007, էջ 322: **Պետրոսյան Ավագ**, Չեն մոռացվի..., «Երեկոյան Երևան», Եր., 26 հունիսի, 1971: **Պետրոսյան Ավագ**, Մարդկային ու առնչմող, «Երեկոյան Երևան», Եր., 29 ապրիլի, 1987: **Ս.Գ.** Մրցանակներ տոնական օրով. այսօր թատրոնի միջազգային օրն է, «Ազգ», 27 մարտի, 2002, էջ 6: **Սանթրյան Վանիկ**, Ամենահայ Ավագ Պետրոսյանը, «Հայաստանի Հանրապետություն», 11 ապրիլի, 2012, էջ 4: **Տեր-Սիմոնյան Մարգարիտ**, Բեմական երկարակեցություն. Ավագ Պետրոսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ, «Հայրենիքի ծայն», 13 ապրիլի, 1983: **Տեր-Սիմոնյան Մարգարիտ**, Ազգային երգարվեստի նվիրյալը: Մարտի 16-ին լրացավ հայ օպերային թատրոնի մեծակատար Ավագ Պետրոսյանի 100-ամյակը, «Ազգ», 17 մարտի, 2012, էջ Ը: **Ванескегян Ирина**, Герой оперной сцены. К 100-летию Народного артиста Армянской ССР Авака Петросяна, “Республика Армения”, 16 марта, 2012, стр. 6. **Вачнадзе Маргарита**, Поэма о любви. “Ануш” на сцене театра оперы и балета имени А.Спендиарова, “Заря Востока”, 4 июня, 1963. **Гомция Наталия**, Он был истинно народным, “Голос Армении”, 10 апреля, 2001. **Гомция Наталия**, Истинно народный, “Голос Армении”, 20 марта, 2012, стр. 6. Звучит музыка Саят-Новый, “Коммунист”, 25 декабря, 1965. **Мирзоян Эдвард**, Классик армянской музыки, “Коммунист”, Ер., 29 мая, 1981. **Петросян Авак**, Я помню до сих пор, “Коммунист”, 29 мая, 1981. **Петросян Авак**, Сегодня с нами он... “Коммунист”, 1 октября, 1985. **Рубин С.** “Ануш”, “Красное знамя”, Орган Сочинского городского комитета КПСС и городского совета депутатов трудящихся Краснодарского края, 25 июня, 1957. Театр солнечной Армении, “Красное знамя”, Орган Сочинского городского комитета КПСС и городского совета депутатов трудящихся Краснодарского края, 19 июля, 1961. **Тер-Симонян М.** Искусство яркое, самобытное, К 70-летию со дня рождения А.Петросяна, “Коммунист”, 27 марта, 1983. **Тер-Симонян М.** Еще одна версия “Алмаст”, “Коммунист”, 31 января, 1984. Торжество нерушимого брательства. Гастроли ереванских гостей начались оперой “Давид-Бек”, “Вечерний Тбилиси”, 1 июня, 1963. **Տեր-Սիմոնյան Մարգարիտ**, Ավագ Պետրոսյան (1912-2000), անտիպ, Ա. Պետրոսյանի

Ի՞նչ իմանային, որ նորածինը դառնալու է հայ բեմի բոլոր ժամանակների լավագույն Սարոն, ում Մոսկվայի կոնսերվատորիայի ընդունելության քննության ժամանակ հաջողություն էր բերելու և մնացած քննություններից ազատելու էր հե՛նց «Բարձր սարերը»: Ի՞նչ իմանար ապագա երգիչը, որ իր անունը հետագայում հարազատ ժողովրդի հիշողության մեջ նույնանալու էր հե՛նց Սարոյի կերպարի հետ: Ի՞նչ իմանար, որ տարիներ անց՝ «Անուշի» հերթական ներկայացումից հետո, իրեն էր մոտենալու Ա.Տիգրանյանը, շնորհավորելու էր, որ ասեր. «Շատ ուրախ եմ, որ Շարա Տալյանից հետո իմ հերոս Սարոն ձեռք բերեց այսպիսի անկեղծ կատարողի: Այժմ ես հանգիստ կարող եմ աշխատել հաջորդ օպերայիս վրա»<sup>5</sup>: Եվ ի նշան հիացմունքի՝ երիտասարդ երգչին էր նվիրելու իր յուղանկար դիմանկարը...

1. Հայ բեմի չգերազանցված tenore di forza-ն<sup>6</sup>



Ա. Պետրոսյանը հայ երգարվեստի ականավոր դեմքերից է, խորհրդահայ վոկալ դպրոցի խոշոր ներկայացուցիչներից այն ինքնատիպ ու խորապես ազգային արվեստագետը, ում մեջ ներդաշնակորեն զուգակցվում էր երգչի և դրամատիկ դերասանի օժտվածությունը, ում ստեղծած կերպարներն առանձնանում էին վոկալ և բեմական պատկերի զարմանալի միասնականությամբ:

Վերամարմնավորման հազվագյուտ ունակությամբ օժտված երգիչը ստեղծեց կենսական ճշմարտացիությամբ և ուժով աչքի ընկնող կերպարների բեմական մարմնավորումներ: Հզորությամբ և ապշեցուցիչ արտահայտչականությամբ աչքի ընկնող նրա բնատուր հազվագյուտ ձայնը երգչին հնարավորություն էր ընձեռում հաղորդել հույզերի բազմաբնույթ զամմա՝ քնքշությունից մինչև պաթոս: Շնորհիվ նյուանսավորման և առողջանության վարպետ տիրապետման, նա իր յուրաքանչյուր երաժշտական ֆրազը հագեցնում էր կերպարային բովանդակությամբ, հարստացնում այն հոգեբանական խոր ենթատեքստով: Օպերայում նրան ամենից առաջ զրավում էր հերոսի ներաշխարհի բազմանիստ բնավորության ողջ բարդության և հակասակա-

անձնական արխիվ: **Խանյան Սուկրատ**, Նրա սիրտն էր երգում ժողովրդի սիրով, անտիպ, Ա. Պետրոսյանի անձնական արխիվ:

5 **Петросян Авак**, Я помню до сих пор, “Коммунист”, 29 мая, 1981.

6 19-րդ դարի օպերայում ձևավորվեցին տենորային դերերգերի երեք հիմնական տիպերը՝ **լիրիկական տենորը** (իտալերեն tenore di grazia) - առանձնանում էր լուսավոր տեմբրով, ուժեղ վերին ռեգիստրով՝ երբեմն մինչև երկրորդ օկտավայի ռե, թեթևությամբ և շարժունությամբ, **դրամատիկ տենորը** (իտալերեն tenore di forza) - բնութագրվում էր բարիտոնային երանգավորմամբ և համեմատաբար փոքր ձայնածավալում հնչողության մեծ ուժով, **լիրիկո-դրամատիկ տենորում** (իտալերեն mezzo-carattere) -միավորվում էին նախորդ երկու տիպերի բնորոշ գծերը:

Պ (Ժ) քապի, թիվ 2 (38) օպերի-հունիս, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

նության բացահայտումը:

Ա.Պետրոսյանն իր բացառիկ գեղեցիկ հնչողությամբ դրամատիկ տենորի մաքրությունը պահպանեց մինչև խոր ծերություն: Նրա հզոր ձայնը՝ իր գեղեցկությամբ եզակի տեմբրով, զուգակցված արտիստիկ հազվագյուտ հմայքով և դերասանական անուրանալի օժտվածությամբ, երգչին բերեց հայ կատարողական արվեստում լավագույն տենորներից մեկի փառքը:

Հայտնի է, որ երգչի<sup>7</sup> հայրը՝ «վաճառական Գեղամ Տեր-Պետրոսյանը, հոգևորականի կարգ է ունեցել. օժտված է եղել հրաշալի բարիտոնով, տարիներ շարունակ պատարագների ժամանակ մեներգել էջմիածնում: Ավագ Պետրոսյանը երկու տարեկանում գրկվել է հորից և անասելի գրկանքներով լի ծանր մանկություն ունեցել...»<sup>8</sup>:

Վաղ հասակում են դրսևորվում երաժշտության հանդեպ Ավագ Պետրոսյանի սերը և բացառիկ երաժշտական ունակությունները: Հասակակիցները սիրով էին ունկնդրում ժողովրդական երգերի նրա կատարումները: Ռոմանոս Մելիքյանը 16-ամյա Ավագին խորհուրդ է տալիս շարունակել երաժշտական կրթությունը. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ նա ընդունվում է երաժշտական ուսումնարան: Ուսուցիչը չձևավորված համարելով իր սանի ձայնը, որոշում է նրան «բաս դարձնել»: Երկրորդ կուրս չփոխադրված, Ավագը որոշում է փոխադրվել երգչախմբային-դիրիժորական բաժին: Օրերից մի օր վոկալիստների դիպլոմային քննության ժամանակ նա մտնում է ուսումնարանի դահլիճ և հանձնաժողովի նախագահ պրոֆեսոր Նադեժդա Կարոյանին խնդրում իրեն լսել: Վերջինս, լսելով երգչախմբային-դիրիժորական բաժնի ուսանողին, ցնցվում է Ա.Պետրոսյանի ձայնից: Հանձնաժողովը որոշում է նրան փոխադրել վոկալ բաժին և ընդունել պրոֆեսոր Ն.Կարոյանի դասարան: Մեկ տարի անց Ավագի ձայնը «բացվում» է: Նա սկսում է երգել ուժգին, ավելի վստահ, մաքուր ու հիասքանչ տենորով:

1936-1939 թվականներին Ա.Պետրոսյանն ուսանում է Երևանի կոնսերվատորիայում՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, օպերային և համերգային երգչուհի (մեցցո սոպրանո), ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, մանկավարժ Նադեժդա Կարոյանի դասարանում, ով Երևան էր հրավիրվել Մոսկվայից՝ 1935-ին և աշխատանքի անցել Երևանի կոնսերվատորիայում (1939-ից՝ պրոֆեսոր):

1937-ի ապրիլին ստեղծվում է հայ երաժշտական իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ երգչախումբը՝ Հայաստանի պետական երգչախումբը, որի մենակատարն է դառնում Ա.Պետրոսյանը: 1939 թ. հոկտեմբերին Մոսկվայում կայացած հայ արվեստի ու գրականության առաջին տասնօրյակի շրջանակներում հայ երաժշտությունը ներկայացնելու պատվին է արժանանում նաև Հայաստանի պետական երգչախումբը. նրա մենակատար Ա.Պետրոսյանն «իր ձայնով զմայլում է Մոսկվայի խստապահանջ ունկնդրին: Մոսկվայան հաջողությունների զագաթնակետն է դառնում նրա ելույթը կրեմլյան կառավարական ճաշկերույ-

7 Ա.Պետրոսյանը ծնվել է Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտին փռված Գյամրեզ գյուղում (1978-ից՝ Կամարիս, այժմ՝ ԳՂ Կոտայքի մարզում): Գյուղի բնակիչների նախնիներն այստեղ էին հաստատվել Մոկսից՝ 1679-ին, հոյից ու Բայազետից՝ 1829-ին: 8-9-րդ դարերում Գյամրեզում կառուցված եռանավ բազիլիկ եկեղեցու ներսում պահպանվել են որմնանկարներ, իսկ արտաքին պատերից մեկի վրայի երկու արձանագրություններից մեկը վերաբերում է 1840-ին Ակոռի գյուղի կործանմանը: Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, Եր., 1977, էջ 110:

8 **Պետրոսյան Արա.** Նրա համար անենաթանկը ժողովրդի սերն էր, «Վասն հայության», թիւ 9, 30.03.2003, էջ 12:

թում: «Ալմաստ» օպերայի Աշոտի արիան կատարելուց հետո Մտալինն անձամբ շնորհավորում է նրան և իր հիացմունքն է արտահայտում»<sup>9</sup>:

Վերադառնալով Երևան՝ երիտասարդը որոշում է իր մասնագիտական երաժշտական կրթությունը շարունակել Մոսկվայի կոնսերվատորիայում և կրկին մեկնում է Մոսկվա: «Վոկալիստների լսումը երեք մասից էր բաղկացած: Լսումների պարտադիր ծրագիրը բաղկացած էր օպերային 7 արիաներից: Ականատեսները պատմում են, որ առաջին իսկ ունկնդրության ժամանակ, երբ Ավագը սկսում է երգել, դահլիճ է լցվում բառի բուն իմաստով ֆենոմենալ մի ձայն: Նրա հազվագյուտ գեղեցկության ու բացառիկ հզորության տենորը լավայի նման լցնում է սրահը և կարող էր լցնել ուզածը թատերական ամենամեծ դահլիճը: Առաջին իսկ ունկնդրության ժամանակ հանձնաժողովն անտեսելով ընդունված կարգը, բուռն ծափահարություններով ողջունում է նրան»<sup>10</sup>: Առաջին փուլում Ա.Պետրոսյանը երգում է Կավարադոսիի արիան Պուչչինիի «Տոսկա» օպերայից:

Հրաշալի տենորի մասին լուրն առնում է խորհրդային դաշնամուրային կատարողական արվեստի առաջատար դպրոցներից մեկի հիմնադիր Ա. Գուրենովյեզերը և հանձնարարում, որ երկրորդ փուլի ժամանակ իրեն տեղեկացնեն, որպեսզի ինքն անպայման ներկա գտնվի: «Ինձանից առաջ երբ որ արդեն մեկը մտավ երգելու,- հետագայում կխոստովանի երգիչը,- ես տեսա, որ Գուրենովյեզերը եկավ ու մտավ ներս: Ես էլ երգեցի «Բարձր սարերը»... Եվ «բարձր սարերը», իրոք, ինձ տարավ բարձր սարեր...»<sup>11</sup>:

Ազատվելով մնացած քննություններից, Ա.Պետրոսյանն ընդունվում է Մոսկվայի կոնսերվատորիայի երրորդ կուրս՝ անցնելով մասնագիտական կրթության փայլուն դպրոց, աշակերտելով պրոֆեսորներ՝ ՌՄՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, սոպրանո Քսենյա Դորլիակին<sup>12</sup> (վոկալ մասնագիտական), խորհրդային կամերային խոշորագույն երգչուհիներից մեկին՝ ՌՄՖՍՀ ժողովրդական արտիստ, սոպրանո Նինա Դորլիակին (կամերային) և ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ՌՄՖՍՀ ժողովրդական արտիստ, դիրիժոր Վասիլի Նեբոլսինին (օպերային դասարան): Քսենյա Դորլիակը, հիացած իր սանի կատարյալ վոկալ տեխնիկայով, առաջին իսկ օրը հայտարարում է, թե «իրեն մնում է լոկ աշխատել երգացանկն ընդարձակելու ուղղությամբ»<sup>13</sup>:

Քսենյա և Նինա Դորլիակների հմուտ ղեկավարությամբ Ավագը պատրաստում է Բախի, Շուբերտի, Շումանի, Վոլֆի, Ռոսսինիի, Վագների, Գրիգի, Գլինկայի, Չայկովսկու, Տանենի, Գլազունովի, Ռախմանինովի և այլոց երկերն ընդգրկող ընդարձակ ծրագիր: Պրոֆեսորը սիրում էր կրկնել, որ «երագում է իր սանին առանց գրիմի տեսնել Օթելլոյի դերերգը կատարելիս»<sup>14</sup>: Իսկ Վասիլի Նեբոլսինը Ավագի հետ պատրաստում է հետևյալ դերերգերը. Գերման՝ Չայկովսկու «Պիկոկվայա դամա», Մանրիկո՝ Վերդիի «Տրուբադուր» և Ռադամես՝ Աիդա», Ռուդոլֆ՝

9 **Տեր-Սիմոնյան Մարգարիտ**, Ավագ Պետրոսյան (1912-2000), անտիպ, Ա.Պետրոսյանի անձնական արխիվ:

10 Նույն տեղում:

11 Ա.Պետրոսյանի անձնական արխիվ:

12 Ք.Ն.Դորլիակի սաներն էին սոպրանո Նինա Դորլիակը, ՌՄՖՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, սոպրանո Ելենա Կրուզիկովան, ՌՄՖՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, մեցցո-սոպրանո Թամարա Յանկոն և ուրիշներ:

13 **Տեր-Սիմոնյան Մարգարիտ**, Ավագ Պետրոսյան (1912-2000), անտիպ, Ա.Պետրոսյանի անձնական արխիվ:

14 Նույն տեղում:

Պուչինիի «Բոհեմա», Սամսոն՝ Մեն-Սանսի «Սամսոն և Գալիլա» օպերաներից: Վ.Ներսիսյանն իր տաղանդավոր սանին ներշնչում էր, որ Հայաստան վերադառնալու հույսեր չփայփայի, խնդրում և պարտադրում էր «միմիայն առանց շեշտադրման օրական մեկ ռուսերեն բառ արտաբերել»<sup>15</sup>, նրա ապագան կապելով Մեծ թատրոնի բեմի հետ:

1941 թ. ապրիլին Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում երգեհոնահար, կոմպոզիտոր, դաշնակահար և մանկավարժ, ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Գեդիկեի երգեհոնային նվագակցությամբ Ա.Պետրոսյանը մեծ հաջողությամբ կատարում է Սամսոնի արիաները Հենդելի «Սամսոն» օրատորիայից: Ելույթը դառնում է նշանակալի իրադարձություն Մոսկվայի երաժշտական կյանքում:

Կոնսերվատորիայի երրորդ կուրսի ուսանողը հանդես է գալիս ինչպես արևմտաեվրոպական և ռուս կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված մենահամերգներով, այնպես էլ նշանավոր արտիստներ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, քնարական տեմոր Իվան Կոզլովսկու, Էմիլ Գիլելսի, Վիկտոր Մերժանովի, Լեոնիդ Կոզանի, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Թամարա Խանումի (Թամար Պետրոսյան), ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սամուիլ Սամոսուդի, Վասիլի Ներսիսի, Ելենա Կրուգիկովայի, Ալեքսանդր Մելիք-Փաշաևի, Սվյատոսլավ Ռիխտերի, ինչպես նաև՝ Ռուբեն Սիմոնովի, Մարգիս Ասլամազյանի, Հենրիկ Թալալյանի, Աննո Բաբաջանյանի և այլոց ընկերակցությամբ:

1941-ին, երբ սկսվում է պատերազմը, կոնսերվատորիայի տնօրեն Ա.Գոլդենվեյզերի միջնորդությամբ, ի թիվս մի շարք տաղանդավոր ուսանողների, ռազմաճակատ չմեկնելու իրավունք է ստանում նաև Ավագ Պետրոսյանը. 1941 թ. սեպտեմբերի 7-ին նա հասնում է Երևան և գրանցվում որպես Երևանի կոնսերվատորիայի 5-րդ կուրսի ուսանող: Շարունակելով ուսանել Ն.Կարոյանի դասարանում, մեկ տարի անց՝ 1942-ին, ավարտում է կոնսերվատորիան՝ ստանալով օպերային երգչի առաջին դերերգերի կատարողի որակավորում: Արդեն 1941-ին Ա.Պետրոսյանն աշխատանքի է հրավիրվում Երևանի օպերայի և բալետի թատրոն, որի հետ էլ անխզելիորեն կապվում է նրա ստեղծագործական ողջ գործունեությունը՝ իր ծանրակշիռ ավանդը բերելով հայ օպերային թատրոնի Ոսկեդարին:

1947-1949 թթ. Ա.Պետրոսյանը վերապատրաստվում է Մոսկվայի Մեծ թատրոնում. Սամուիլ Սամոսուդի հետ պատրաստում է հետևյալ դերերգերը՝ Վակուլա՝ Պ.Չայկովսկու «Չերեվիչկի», Խոզե՝ Ժ.Բիզեի «Կարմեն», Կանիո՝ Ռ.Լեոնկավալլոյի «Պայացներ» և Ռաուլ՝ Ջ.Մեյերբերի «Հուգենոտներ» օպերաներից: Չուգահեռաբար երգիչը Խորհրդային Միության տարբեր քաղաքներում հանդես է գալիս արևմտաեվրոպական, ռուս և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված մենահամերգներով, իսկ Ուկրաինայում բնագրով կատարում է ուկրաինական երգերի ծրագիրը:

Ա.Պետրոսյանի՝ որպես երգչի ձևավորման գործում մեծ նշանակություն ունեցան նրա ստեղծագործական սերտ շփումները դիրիժոր Միքայել Թավրիզյանի հետ: «1944 թվականին անգլուգական դիրիժոր Միքայել Թավրիզյանի ղեկավարությամբ բեմ բարձրացրի Մարոյի կերպարը: Թավրիզյանը բացառիկ անհատականություն էր, որի հետ ես բախտ ունեցա ստեղծել մի շարք դերերգեր: Նա

<sup>15</sup> Նույն տեղում:

նրբանկատ էր, մեծ կուլտուրա ու փորձ ուներ, ստեղծագործական ազատություն էր տալիս դերասաններին, նպատակաուղղում վերջիններիս մտահղացումները»<sup>16</sup>: Մ.Թավրիզյանը համոզված էր՝ «օտարներին չես զարմացնի Ռադամեսներով ու Խոզեներով: Նրանց պիտի ապշեցնես քո ազգային երգարվեստով, և դա պիտի առաջնահերթ լինի հայ երգչի համար»<sup>17</sup>: Հենց նրա խորհուրդն էլ ճակատագրական եղավ երիտասարդ երգչի համար:

Ա.Պետրոսյանի այցեքարտը դարձան, առաջին հերթին, հայ ազգային օպերաների գլխավոր հերոսների դերերգերը՝ Սարո՝ Ա.Տիգրանյանի «Անուշ», Սանթրո՝ Ա.Տիգրանյանի «Դավիթ Բեկ», Աշուղ և Շեյխ՝ Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ», Կարո՝ Ա.Բաբանի «Արծվաբերդ», Տիրիթ՝ Տ.Չուխաճյանի «Արշակ Երկրորդ», Վահան՝ Հ.Ստեփանյանի «Հերոսուհին», Մոս՝ Վ.Տիգրանյանի «Մոս և Վարդիթեր», Մեյրան՝ Լ.Խոջա-Էյնաթյանի «Նամուս» օպերաներում: Երգչի երգացանկում, բնականաբար, տեղ գտան նաև արևմտաեվրոպական կոմպոզիտորների օպերաներից դերերգեր, որոնցից հատկապես առանձնանում են Կավալարադոսին՝ Պուչչինիի «Տոսկա», Ռաուլը՝ Մեյերբերի «Հուզենոտներ», Ռադամեսը՝ Վերդիի «Աիդա» և Մանրիկոն՝ Վերդիի «Տրուբադուր» օպերաներում: Ա.Պետրոսյանը ճանաչվեց Քյոռ-Օղլու լավագույն մեկնաբանը Ռու.Հաջիբեկովի համանուն օպերայում:

Ա.Պետրոսյանը հայ օպերային թատրոնում դարձավ ազգային այն օպերաների տեներային դերերգերի առաջին մեկնաբանը, որոնց նախատիպերը չկային, ուստիև այդ կերպարները ստեղծելու էր ինքը: Նա Տ.Չուխաճյանի «Արշակ Երկրորդում»՝ Տիրիթի, Ա.Տիգրանյանի «Դավիթ Բեկում»՝ Սանթրոյի, Ա.Բաբանի «Արծվաբերդում»՝ Կարոյի, Վ.Տիգրանյանի «Մոս և Վարդիթերում»՝ Մոսի, Հ.Ստեփանյանի «Հերոսուհին» օպերայում՝ Վահանի<sup>18</sup>, Լ.Խոջա-Էյնաթյանի «Նամուսում»՝ Մեյրանի կերպարների առաջին մեկնաբանն էր:

Սիննույն ժամանակ Ավագ Պետրոսյանը նորովի մեկնաբանեց նախկինում արդեն բեմական կյանքով ապրող հերոսների դերերգերը: Նրա հերոսները սիրում էին, տառապում, նրանց զգացմունքները միշտ անկեղծ էին, բնական, խորը և անմիջական: Շնորհիվ իր դերասանական տաղանդի, երգիչը ստեղծում էր ինքնատիպ, խոր և բազմանիստ կերպարներ:

Հընթացս Երևանի օպերային թատրոնում իր տևական գործունեության, Ա.Պետրոսյանը ստեղծել է տարաբնույթ կերպարների մի ամբողջ պատկերասրահ՝ վարպետորեն բացահայտելով իր հերոսների բարդ ներաշխարհը:

Ավագ Պետրոսյանի ստեղծագործական կենսագրության գլուխգործոցը Սա-

16 Պետրոսյան Ավագ, Չեն մոռացվի..., «Երեկոյան Երևան», 26 հունիսի, 1971:

17 Ա.Պետրոսյանի անձնական արխիվ:

18 1950-ի նոյեմբերին 8-ին Երևանի օպերայի և բալետի թատրոնում Վ.Աճեմյանի բեմադրությամբ ներկայացվում է Հ.Ստեփանյանի «Հերոսուհին» օպերան, որը հայ արվեստում ժամանակակից թեմայով գրված օպերայի ստեղծման առաջին փորձն էր: Լիբրետոյի առաջին տարբերակն ըստ Լ.Ջադյանի «Արմենուհի» պեմի գրել էր Վ.Աճեմյանը: Բեմադրող դիրիժորն էր Մ.Թավրիզյանը: Գլխավոր հերոսի՝ Վահանի մի քանի արտահայտիչ համարներ պարունակող, երաժշտության ժողովրդական-ազգային կոլորիտով առանձնացող դերերգը փայլուն մեկնաբանում է Ա.Պետրոսյանը: «Հերոսուհին» 1951-ին արժանանում է Խորհրդային Միության պետական մրցանակի: Դավենեկիրների թվում էին օպերայի հեղինակը՝ Հ.Ստեփանյանը, դիրիժորը՝ Մ.Թավրիզյանը, ռեժիսորը՝ Վ.Աճեմյանը, նկարիչը՝ Աշոտ Միրզոյանը և գլխավոր դերակատարները՝ Գոհար Գասպարյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Ավագ Պետրոսյանը և Վահրամ Գրիգորյանը: Տես Ալ.Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն (կազմող և տեքստի հեղինակ՝ Կ.Մարկոսյան), Եր., 1984, էջ 26:

րոյի և Սանթրուրի կերպարներն էին («Անուշ» և «Դավիթ-Քեկ»):

Սարոյի կերպարն անբաժանելի դարձավ իր մարմնավորողից: «Ավագ Պետրոսյանի Սարոն այն հազվագյուտ դեպքերից է, երբ օպերային կերպարն ու այն մարմնավորողն ունկնդրի համար դառնում են իրարից անբաժան: Այդ երիտասարդ գեղջուկ չոբանի դերերգի վոկալ կատարման մեջ գերում են պարզ անկեղծությունը, կրքոտ հուզականությունը, նրբերանգների հարստությունը, որոնք արտացոլում են ժողովրդական երգայնության ոգին, ինչն էլ երգեցողությանը հաղորդում է յուրահատուկ կոլորիտ և ազգային որոշակիություն»<sup>19</sup>:

Համաշխարհային երաժշտական թատրոնի պատմության մեջ կան դերեր (ու որանք շատ չեն), որոնք ունկնդրի մոտ միաձուլվում են այս կամ այն ակնավոր դերասանի հետ: Այդպիսին էր, օրինակ, Յուրոդիվի-Ի.Կոզլովսկին Մ.Պ.Մուսորգևկու «Բորիս Գոդունով» օպերայում: Հայ երաժշտական թատրոնի պատմության մեջ դա Արշակ Պենկյանն էր. նրա ռեժիսորական և դերասանական գլուխգործոցը «Լեբլեբիջին» էր, որտեղ հանդես էր գալիս Հոր-հորի դերերգով: Տարիներ շարունակ նրա անունը Լեբլեբիջի Հոր-հոր աղայի հոմանիշն էր, և պատահական չէր, որ 1923-ին, արդեն հանգուցյալ Պենկյանի «դագաղին վրայ դրուեցաւ Լեպլեպիճիի տարազը, զոր տարիներով գործածած էր բեմին վրայ, այդ դերը անձնատրած ատեն»<sup>20</sup>: Դագաղին հանգրվանեց նաև հռչակավոր մաղը, որն օգտագործել էր հանգուցյալը երեսուն տարվա ընթացքում՝ ավելի քան հազար անգամ: Կարծես իր կերպարի անգուգական մարմնավորողի հետ թաղվում էր նաև Հոր-հոր աղան<sup>21</sup>: Հանգուցյալի կտակի համաձայն՝ նվագախումբը կատարում է Լեբլեբիջիների խմբերգը<sup>22</sup>:

Հայկական կատարողական արվեստի խոշոր ներկայացուցիչ Ա.Պետրոսյանը նույնպես պատմության մեջ մտավ առաջին հերթին իր Սարոյի դերերգով:

## 2. Ավագ Պետրոսյան - Սարոն

«Թումանյանի պոեզիան սիրում էի մանկուց,- հետագայում կխոստովանի երգիչը,- Եվ կարելի է պատկերացնել, թե ինչ երջանիկ էի, երբ 1944 թվականին ինձ առաջարկեցին երգել Սարոյի դերերգը «Անուշ» օպերայում: Կերպարն ինձ գերեց իր բյուրեղյա մաքրությամբ և ուժով: Տիգրանյանի երաժշտությունը լիարժեք բացահայտում է տեքստի հմայքը: Սկսելով աշխատանքը դերի վրա, ես զգում էի իսկական ստեղծագործական ոգևորություն և միևնույն ժամանակ՝ արտասովոր պատասխանատվություն. չէ՞ որ այդ դերերգը կատարել էր նշանավոր Շարա Տալյանը»<sup>23</sup>:

19 Тер-Симонян М. Искусство яркое, самобытное, К 70-летию со дня рождения А.Петросяна, «Коммунист», 27 марта, 1983.

20 Պեշկոպաշևան Ն., Թատերական դեմքեր, Անթիլիաս, 1969, էջ 1106:

21 Տարիներ անց, ներկա գտնվելով «Լեբլեբիջիի» բեմադրություններին Աթենքում՝ հունական, Վիեննայում՝ գերմանական խմբերի կատարմամբ, ապա Երևանում՝ «Կարինեի» բեմադրության ժամանակ, Վ.Փափազյանը ներկայացումները կիսատ թողած հեռացել է դահլիճներից՝ Ա.Պենկյանի խաղի տպավորությունը չփչացնելու համար:

22 Պատահականություն էր արդյոք, թե ուղղակի զուգադիպություն, որ Պենկյանի անժամանակ մահը վրա հասավ իր վերջին ներկայացումից ընդամենը երեք օր անց՝ 1923-ի ապրիլի 8-ին, Պոլի Շանի թատրոնում, ասես, նա առիավետ հրաժեշտ տվեց իր հանդիսատեսին՝ իր սիրելի «Լեբլեբիջիում», իր պաշտելի Հոր-հորի դերով:

23 Петросян Авак, Я помню до сих пор, «Коммунист», 29 мая, 1981.



Ավագ Պետրոսյանը Սարոյի դերում

Սակայն, ինչպես նկատել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, երգչի հետ ափելի քան քառորդ դար գործընկեր եղած դիրիժոր Հակոբ Ոսկանյանը՝ «Ա. Պետրոսյանը գերի չմնաց Սարոյի առաջին մեկնաբան, հայ երգարվեստի կորիֆեյներից մեկի՝ Շարա Տալյանի ստեղծածին, և ստեղծեց իրենը՝ իր Սարոն, նոր, անգուգական Սարոն»<sup>24</sup>:

Ինչպես 1981-ին կխոստովանի երգիչը՝ «Դժվար է հիշել տասնյակ տարիներ առաջ տեղի ունեցած անցուդարձը, սակայն մարդկանց կյանքում լինում են այնպիսի իրադարձություններ, որոնք հիշվում են մանրամասնությամբ և երբեք չեն մոռացվում: Իմ կյանքում մնան դեպքերից մեկը «Անուշ» օպերայի ներկայացմանն իմ առաջին մասնակցությունն էր, որը տեղի ունեցավ 1944 թվականի մարտի 24-ին: Առաջին անգամ հանդես եկա նշանավոր երգչուհի Հայկանուշ

Դանիելյանի հետ»<sup>25</sup>: Սակայն երիտասարդ երգիչը փառքով է դուրս գալիս հայկական օպերային թատրոնի հռչակավոր պրիմադորնայի հետ հանդես գալու փորձությունից: «Իմ բազմաթիվ կատարումների ու դերընկերների մեջ կան անձեր և անցքեր, որոնք երբևէ չեն մոռացվի: Հիշում եմ. «Անուշ» էինք ներկայացնում տաղանդավոր Հայկանուշ Դանիելյանի հետ: Փախուստի տեսարանում նա արդեն բավականին հոգնել էր և ցածրաձայն ասաց.

-Ավագ, ինձ վերցրու յափնջու մեջ և իսկապես փախցրու, այլապես արագ չեմ կարողանում վազել:

Արվեստագետներ կան, որոնց մահից հետո նրանց տեղը բաց է մնում: Դրանք բացառիկ օժտված մարդիկ են: Այդպիսիք են Շարա Տալյանը, Միքայել Թավրիզյանը, Հայկանուշ Դանիելյանը, ինչպես դրամատիկական թատրոնում՝ Ներսիսյանն ու Փափազյանը»<sup>26</sup>:

Հետագայում Սարոյի դերերգը Ա. Պետրոսյանը կատարել է Անուշի 18 դերակատարների, այդ թվում՝ Գոհար Գասպարյանի, Արմինե Թութունջյանի, Թագուհի Բյուսայանի, Ելենա Վարդանյանի, Էլլադա Չախոյանի, Էլվիրա Ուզունյանի, Աննա Նշանյանի, Արսիինե Փեղիվանյանի, ինչպես նաև ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Ֆրանգիզ Ահմեդովայի հետ. վերջինս Անուշի դերերգը կատարում էր աղբբեջաներեն:

«Չորս տասնամյակի ընթացքում երգել եմ մոտ 600 անգամ, ինչպես հայկական, այնպես էլ աղբբեջանական բեմում: Մեծ մասամբ հանդես եմ եկել Գոհար Գասպարյանի խաղընկերությամբ, 1956 թվականին Մոսկվայում կայացած հայ արվեստի և գրականության տասնօրյակին, ինչպես և «Անուշի» 700 և 800-րդ հորելյանական ներկայացումներին: Սարոյի դերերգի իմ 600-րդ կատարումը տե-

24 Ա. Պետրոսյանի անձնական արխիվ:  
25 Դավթյան Ռոբերտ, Միշտ ինձ հետ եմ, «Սովետական Հայաստան», Եր., 29 մայիսի, 1981:  
26 Պետրոսյան Ավագ, Չեն մոռացվի..., «Երեկոյան Երևան», Եր., 26 հունիսի, 1971:

դի կունենա մեծ կոմպոզիտորի ծննդյան 100-ամյակի օրերին»<sup>27</sup>:

«Սարոն առանձնակի տեղ ունի ոչ միայն նրա ստեղծագործական կենսագրության, այլև մեր օպերային արվեստի պատմության մեջ: Ավագ Պետրոսյանի Սարոն երգչի՝ բեմական կերպարով խորապես ապրելու, նրա հետ միաձուլվելու բացառիկ օրինակ է, և բեմական կյանքում ոչ այնքան հաճախ հանդիպող օրինակներից է, երբ օպերային հերոսը և նրան կերպավորողը ձուլվում են իրար, միասնանում, դառնում մի ամբողջություն այնպես, որ ունկնդրի պատկերացման մեջ այլևս անկարելի է նրանց տարբերակել: Գեղջուկ սիրահար հերոսի դերերգի մեջ թրթռում է սրտագին անկեղծությունը, կրքոտ զգացմունքայնությունը, ժողովրդական երգերի ոգուն բնորոշ նրբերանգների հարստությունը, որոնք երգեցողությանը հաղորդում են ազգային վառ կոլորիտ: Երգչի դերակատարումն այնքան բնական ու անկաշկանդ է, որ ունկնդրին մոռանալ է տալիս բեմական, թատերական պայմանականությունը: Պետրոսյանի Սարոն մեծ հաջողություն է վայելում ոչ միայն հայ, այլև ամենատարբեր ազգությունների պատկանող հանդիսատեսների մոտ»<sup>28</sup>:

Հայ օպերային թատրոնի պատմության մեջ իսկական լեգենդ դարձավ Գոհար Գասպարյան-Անուշ և Ավագ Պետրոսյան-Սարո գույգը: «Երբ որ «Անուշի» պատրաստությունն էր սկսվում,- հետագայում կիիշի Գ.Գասպարյանը,- մի քիչ դժվարանում էի, բայց Միքայել Թավրիզյանը միշտ ինձ համոզում էր, որ դա պիտի լինի իմ գլուխգործոց դերակատարությունը: Եվ անընդհատ խոսում էր պարտնյորների մասին: «Գիտե՞ս ով պիտի լինի քո Սարոն: Ավագ Պետրոսյանը: Նա շատ օգնող է բեմի վրա, դու չվախենա»: Եվ իսկապես այդպես եղավ: Պրեմիերան արդեն մոտենում էր: Ավագի հետ ծանոթացանք և շատ ընկերացանք: Մի օր ասաց. «Տես, ես ուրախ տղա եմ, հանկարծ բեմի վրա մի բան լինի՝ չծիծաղես, որովհետև ես էլ կծիծաղեմ և խայտառակ կլինենք»: Եվ այդպես միասին երգեցինք: Շատ-շատ երջանիկ էի ես: Երբ «Անուշ» էր լինում, ես շատ ուրախանում էի, որովհետև Ավագը հիանալի երգիչներից էր, մեծ զգացումով, մեծ հասկացողությամբ, իսկական հայ, իսկական գյուղացի տղա էր խաղում: Եվ այնպես էր անում, որ ինքը երկրորդ պլանի վրա լինի, էնպես չլինի, որ ինձ կաշկանդեր կամ դժվարացներ իմ խաղը: Ընդհակառակն՝ օգնում էր»<sup>29</sup>:

«Գոհար Գասպարյան-Ավագ Պետրոսյան գույգը, Միքայել Թավրիզյանի դեկավարությամբ, համարվել է անկրկնելի, իսկ 1953 թ. «Մելոդիա» ֆիրմայի «Անուշ» օպերայի ձայնագրությունը մինչ օրս համարվում է լավագույնն ու անգերազանցելի»<sup>30</sup>:

Ա. Պետրոսյան-Սարոյի հետ բազմիցս հանդես եկած Աննա Նշանյան-Անուշը նկատել է, որ «Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը եւ նրա հարթած ճանապարհով քայլ առած Արմէն Տիգրանեանը երբ կերտել են Սարոյի կերպարը՝ հաւանաբար պատկերացրել են Աւագ Պետրոսեանին: Ան աշխարհ եկած էր Սարօն երգելու համար: Առ այսօր Աւագն իմ յիշողութեան մէջ Սարօ է եւ անզուգական Սարօ: Բեմում ենք: Աւագ-Սարօն, մորթէ փափախը գլխին, սեւ

27 **Դավթյան Ռոբերտ**, Միշտ ինձ հետ են, «Սովետական Հայաստան», Եր., 29 մայիսի, 1981:

28 **Տեր-Սիմոնյան Մ.**, Բեմական երկարակեցություն. Ավագ Պետրոսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ, «Հայրենիքի ձայն», Եր., 13 ապրիլի, 1983:

29 Ա. Պետրոսյանի անձնական արխիվ:

30 **Տեր-Սիմոնյան Մարգարիտ**, Ավագ Պետրոսյան (1912-2000), անտիպ, Ա. Պետրոսյանի անձնական արխիվ:

եափունջին ուսին, կեռ գլխով մահակը ձեռին, ինձ այնպես թուաց, որ ես իսկական հայրենի սարերում եմ, եւ իմ դիմաց Թումանեանի Սարօն է, որ հարազատօրէն մերուած էր նոյն լեռներուն, նոյն անտառներուն, նոյն հողին ու թութայ երկնքին: Աւագ Պետրոսեանի գուլալ ձայնը բնական հնչողութեամբ, գալիս էր Լոռուայ սարերէն ու խենթ Դեբետէն»<sup>31</sup>:

Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը Սոչիում իր 1957 թվականի հյուրախաղերն սկսում է «Անուշի» ներկայացմամբ, որտեղ Անուշի դերերգով հանդես է գալիս Գոհար Գասպարյանը, իսկ Սարոյի դերերգով՝ Ա. Պետրոսյանը. «Նրա դերերգը հագեցած է քնարականությամբ: Սարոն ոչ միայն Անուշին սիրահարված հովիվ է, այլև ժողովրդական պոետ և երգիչ-իմպրովիզատոր, աշուղների (գուսանների) նման: Նրա սիրային սերենադը Անուշի պատվին օպերայի առաջին պատկերում՝ միաժամանակ սիրո և կյանքի ուրախության հիմն է: Նրա՝ խոր տխրությամբ և անանց վշտով հագեցած վերջին արիան, որը երգում է հինգերորդ գործողության մեջ, տառապելով սիրելիի հետ հարկադրված բաժանումից, միաժամանակ դարիբի՝ աշխարհով մեկ թափառող և հայրենի երկիրը կարոտող անտունիի երգ է: Արտիստի ուժեղ և հնչեղ ձայնն առավել արտահայտչականության է հասնում սիրեցյալին ուղղված քնարական երգ-արիայում՝ երրորդ գործողության մեջ»<sup>32</sup>:

### 3. Ավագ Պետրոսյան - Տիրիթը

1945-ի նոյեմբերին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ, Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բեմում Միքայել Թավրիգյանի ղեկավարությամբ առաջին անգամ հնչում է Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդը»՝ արժանանալով ջերմ ընդունելության: Ներկայացման մեջ ընդգրկվել էին հայ բեմի առաջատար ուժերը՝ Հայկանուշ Գանիեյանը (Օլիմպիա), Տաթևիկ Սազանդարյանը (Փառանձեմ), Շարա Տալյանը, Պավել Լիսիցյանը (Արշակ Երկրորդ), Ավագ Պետրոսյանը (Տիրիթ): Նկարչական ձևավորումն իրականացրել էր նկարիչ Պատվական Անանյանը: «Արշակ Երկրորդի» բեմադրությունը դարձավ ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև Խորհրդային Միության մշակութային կյանքի առավել վառ ու նշանակալի իրադարձություններից մեկը՝ արժանանալով երկրի բարձրագույն պարգևի՝ Ստալինյան մրցանակի: «Շապուհի գործակալի՝ Տիրիթի դերերգի կատարմամբ հանդես եկավ Ավագ Պետրոսյանը, վկայելով դերերգչի լուրջ առաջադիմությունը թե՛ վոկալ և թե՛ բեմական առումով»<sup>33</sup>:

Ճակատագրի կամքով Ա. Պետրոսյանը հայկական առաջին օպերայում պիտի մարմնավորեր հայրենիքի դավաճանի կերպարը: «Երևանի օպերային թատրոնում Տ. Չուխաճյանի «Արշակ 2-րդ» օպերայի առաջին բեմադրության ժամանակ երգիչը ստեղծեց Տիրիթի հոգեբանորեն բարդ կերպարը, վարպետորեն օգտագործելով իր բեմական և ձայնային լայն հնարավորությունները»<sup>34</sup>: Երգիչը նրբորեն բացահայտեց իր հերոսի հուզական բարդ աշխարհը. նրա Տիրիթը մի կողմից՝ հայրենիքի դավաճան է, իսկ մյուս կողմից՝ կրքոտ սիրահար:

31 Նշանեան Ա., Երգը Յուշերուս..., Լոս-Անճելըս, 2003, էջ 135:

32 Рубин С. “Ануш”, “Красное знамя”, Сочи, 25 июня, 1957.

33 Սարկոսյան Կարլոս, Իսկական գանձարան, «Երեկոյան Երևան», 29 ապրիլի, 1987:

34 Ավագ Պետրոսյան, «Եթերում է Երևանը», Եր., 28 օգոստոսի, 1971:

#### 4. Ավագ Պետրոսյան - Մանթուրը

Մեծ հայրենականի առաջին տարիներին Արմեն Տիգրանյանը ձեռնամուխ է լինում «Դավիթ Բեկ» հերոսական-հայրենասիրական օպերայի ստեղծմանը՝ լիբրետոն կազմելով ըստ Բաֆֆո «Դավիթ Բեկ» վեպի (1882): 1950-ին վախճանվում է Ա.Տիգրանյանը՝ թողնելով «Դավիթ Բեկի» կլավիրը<sup>35</sup>: Կոմպոզիտորի մահից հետո օպերայի վերջնական ավարտման և խմբագրման ուղղությամբ զգալի աշխատանք են կատարում Գևորգ Բուդաղյանն ու Լևոն Խոջա-Էյնաթյանը: Իսկ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը ձեռնամուխ է լինում նոր օպերայի բեմադրությանը՝ նվիրելով այն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 30-ամյակին:

1950 թ. «Դեկտեմբերի 3-ին կայացավ «Դավիթ Բեկի» առաջին բեմադրության պրեմիերան: Ներկայացման երաժշտության խմբագիրը և դիրիժորն էր Գևորգ Բուդաղյանը, բեմադրող ռեժիսորն էր Գոհարինե Մելքումյանը, նկարիչը՝ Վասիլ Վարդանյանը, խմբավարը՝ Կարո Կարապետյանը, պարերի հեղինակն էր Զարեհ Մուրադյանը: Դերակատարումներով հանդես եկան. Դավիթ Բեկ՝ Շարա Տալյան, Ստեփանոս Շահումյան՝ Արտավազ Օհանյան, Թամար՝ Տաթևիկ Սազանդարյան, Շուշան՝ Եվգենյա Խաչիկյան, Մանթուր՝ Ավագ Պետրոսյան, Մելիք՝ Դավիթ Պողոսյան, Պարսից խան՝ Կարլոս Մարկոսյան, Վախթանգ 6-րդ՝ Մուրեն Շախիջանյան»<sup>36</sup>:

«Դավիթ Բեկ»-ում Ավագ Պետրոսյանը մեծ հաջողությամբ է կերտում գեղջուկ Մանթուրի՝ աշուղ-ռազմիկի կերպարը: Նա անկեղծ զգացմունքայնությամբ է կատարում իսկական ժողովրդական ինտոնացիաներով ներթափանցված «Հորովելլը» և «Հեյ թուխա ամպեր, հով արեք» քնարական երգը՝ առաջին գործողությունից, աշուղական ոճով ստեղծված երգը՝ երրորդ գործողության առաջին պատկերից և, վերջապես, մահառաջի երգը՝ երրորդ գործողության չորրորդ պատկերից:

Անդրադառնալով «Դավիթ Բեկ» օպերայի երրորդ բեմադրությանը, երաժշտագետ Մամսոն Գասպարյանը նկատում է. «Ա.Պետրոսյանի բեմական գործունեության մեջ Մանթուրի դերակատարումը թերևս ամենահաջողված կերպարներից մեկն է: Այդ դերերգում Պետրոսյանն իրոք որ իր տարերքի մեջ է: Առանձնապես տպավորիչ է մահվանից առաջ «Արցունք մի թափեք իմ գերեզմանին» արիայի կատարումը: Իր պարզ ու անբռնազբոսիկ խաղով, ջերմ ու անմիջական երգեցողությամբ Ա.Պետրոսյանն ստեղծել է հիշողության մեջ երկար ժամանակ մնացող աննկուն հայրենասեր, ռազմիկ Մանթուրի կերպարը»<sup>37</sup>:

«Ա.Տիգրանյանի «Դավիթ Բեկը» հայկական պատմահայրենասիրական օպերայի լավագույն նմուշներից է,- նշում էր Ա.Պետրոսյանը,- իսկ Մանթուրը՝ օպերայի ամենահաջողված կերպարներից մեկը: Իր հայրենիքը անսահմանորեն սիրող զինվորի կերպարը միշտ էլ ինձ հուզել է, և այդ դերերգը միշտ կատարել եմ բարձր պատասխանատվությամբ, ձգտելով պահպանել Ա.Տիգրանյանի՝ իբրև

35 Տե՛ս **Тигранов Георгий**. Оперное и балетное творчество, “Музыкальная культура Армянской ССР, Сборник статей”, Москва, 1985, с. 84-85:

36 **Մարկոսյան Կարլոս**, Տարեգրության էջերից, «Սովետական Հայաստան», Եր., 29 մայիսի, 1981:

37 **Գասպարյան Ա.**, «Դավիթ Բեկ». Ալ.Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնի նոր բեմադրությունը, «Սովետական Հայաստան», 17 հուլիսի, 1953:

կոմպոզիտորի, ինքնատիպ ձեռագիրը, մեկնաբանության հավաստիությունը, ժողովրդական երաժշտությանը հարազատ մնալու կարևորությունը: Հայ բեմում կատարած իմ բազմաթիվ դերերգերի շարքում Սանթուրն իմ ամենասիրած կերպարներից է»<sup>38</sup>:

«Կիսամութ դահլիճում նստած, շատերի պես ես էլ եմ ունկնդիր նվագախմբով բեմական փորձին: Դիրիժորը Միքայել Թավրիզյանն է, նա ղեկավարում էր երաժշտության ոչ միայն չափն ու նոտաները, այլև նրա մարդկային էությունը, նրա բազմահույզ ու բազմերանգ հնչյունային կյանքը: «Հեյ թուխս ամպեր, հով արեք»՝ բեմից երգում էր Ավագ Պետրոսյանը և նրա ձայնում զարմանալի պարզությամբ առկայծում էին Սանթուրի լուսավոր թախիծն ու անձնվեր հայրենասիրությունը, ես աստիճանաբար ձերբազատվում եմ կենցաղի մանրուքներից, ինձ պատում է դյուրին մի անկաշկանդություն և ապրում եմ հույզի լիարժեքությունը. աներևույթ մի ձեռք կոկորդս է սեղմում... ես գաղտագողի ստուգում եմ, թե կողքիս նստած դասընկերս՝ Նորայր Սարգսյանը, արցունքս չի՞ նկատել և զարմանում եմ. նրա դեմքը արցունքներով է ողողվում և նա շրթունքներն է կրծոտում... հետո մենք շատ մոտիկից տեսնում ենք, թե ինչպես մեռնող Սանթուրի վերջին ուղերձը երգելիս Ավագ Պետրոսյանը զուճակով է, սփրթնում. դա պարզ երևում է նույնիսկ գրիմի տակից... և նրա երգի վերջին հնչյունները հնչյուններ չեն, այլ տառապած հոգու հառաչ...»<sup>39</sup>:

Եվ ընդհանրապես՝ «Ա. Պետրոսյանի Սանթուրը համարվել է որպես կատարողական արվեստի անգերազանցելի օրինակ: Մոսկվայի կոնսերվատորիայի հռչակավոր պրոֆեսոր Նինա Դորլիակն իր ուսանողներին պարբերաբար լսել էր տալիս Ավագ Պետրոսյանի Սանթուրի արիաների ձայնագրությունը, որպես վոկալ կատարողական արվեստի գլուխգործոց»<sup>40</sup>:

1956-ի հունիսի 1-13-ին Մոսկվայում կայացած հայ արվեստի ու գրականության երկրորդ տասնօրյակի շրջանակներում Երևանի օպերայի և բալետի թատրոնը Մեծ թատրոնում, ի շարս «Անուշ», «Արշակ Երկրորդ», «Պիկոկայա դամա» օպերաների և «Սևան» բալետի, նոր խմբագրությամբ մեծ հաջողությամբ ներկայացնում է նաև «Դավիթ Բեկը»: Բոլոր ներկայացումներն անցնում են բացառիկ հաջողությամբ: «Մամուլը նշում էր կոլեկտիվի պրոֆեսիոնալ նշանակալի առաջադիմությունը, հատկապես ընդգծելով Միքայել Թավրիզյանի, Գոհար Գասպարյանի, Տաթևիկ Սազանդարյանի, Նար Հովհաննիսյանի, Միհրան Երկաթի, Ավագ Պետրոսյանի փայլուն ելույթները»<sup>41</sup>:

Հետագայում Ավագ Պետրոսյանը վերհիշում էր. ««Դավիթ Բեկ» օպերայում ես երգում եմ Սանթուրի դերերգը: Ես այդ դերի առաջին կատարողն եմ: Սա իմ սիրելի դերերգն է: Մինչ օրս հիշում եմ օպերայի փայլուն հաջողությունը Մոսկվայում, 1956 թվականին»<sup>42</sup>: Սանթուրի և Սարոյի դերերգերի փայլուն կատարման համար Ա. Պետրոսյանը պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և արժանանում Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստի պատվա-

38 **Դավթյան Ռոբերտ**, Միշտ ինձ հետ եմ, «Սովետական Հայաստան», Եր., 29 մայիսի, 1981:  
39 **Լևոնյան Տիգրան**, «Դավիթ Բեկը» պայքարի ղողանջ է, Եր., «Սովետական Հայաստան», 21 մարտի, 1986:  
40 **Տեր-Սիմոնյան Սարգարիտ**, Ավագ Պետրոսյան (1912-2000), անտիպ, Ա. Պետրոսյանի անձնական արխիվ:  
41 Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն (կազմող և տեքստի հեղինակ Կ. Մարկոսյան), Եր., 1984, էջ 21-22:  
42 **Петросян Авак**, Я помню до сих пор, “Коммунист”, Եր., 29 мая, 1981.

վոր կոչման:

Երևանի Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի 1956 թվականի լենինգրադյան հյուրախաղերը մեկնարկում են Ա.Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայով: «Ներկայացման նշանակալի հաջողությունների թվին պետք է դասել իր կյանքը հանուն հայրենիքի ազատության զոհաբերած գեղջուկ Սանթրուրի դերերգի Ա.Պետրոսյանի կատարումը»<sup>43</sup>: Թատրոնը վերստին «Դավիթ Բեկով» է սկսում 1963 թվականի իր թրիլիսյան հյուրախաղերը. «Նրբազգացությամբ և հուզիչ անկեղծությամբ կատարեց Սանթրուրի դերերգը Պետական մրցանակի դափնեկիր, Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների ժողովրդական արտիստ Ա.Պետրոսյանը»<sup>44</sup>:

## 5.Ավագ Պետրոսյանը՝ կամերային երգիչ

Ա.Պետրոսյանը խոշոր կամերային երգիչ էր՝ նուրբ մեկնաբանը հայ, ռուս և արևմտաեվրոպական դասական կոմպոզիտորների՝ Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի, Ռախմանինովի, Բախի, Հենդելի, Գլյուկի, Մոցարտի, Շոպենի, Գրիգի, Պուչինիի, Մեն-Սանսի, Լեոնկավալլոյի, Ռախմանինովի: Նրա կատարմամբ ուշագրավ էին հատկապես Կոմիտասի («Չինար ես», «Ծիրանի ծառ», «Քելե-քելե»), Ռոմանոս Մելիքյանի («Մի լար»), Գուրգեն Ալեմշահի («Կուզեի»), Գրիգոր Եղիազարյանի («Սարի աղբյուր»), Աշոտ Սաթյանի («Մարտիկի երգը», «Արարատյան հովտի երգեր» վոկալ-սիմֆոնիկ շարքը, «Աղբյուրի մոտ») երգերն ու ռոմանսները:

Նա հայ կոմպոզիտորների բազմաթիվ երգերի առաջին կատարողն էր և ունկնդիրների համար բացահայտեց դրանցից շատերը: Բազմաթիվ երգեր են կոմպոզիտորները գրել հենց Ա.Պետրոսյանի համար: Գրանցից է Աշոտ Սաթյանի քնարական «Մարտիկի երգը»՝ Գեղամ Սարյանի խոսքերով: Այդ հրաշալի երգը գտավ իր անգուգական ու անկրկնելի մեկնաբանին և 1944-ին, տակավին 32 տարեկան երգչի կողմից ստանալով կյանքի ուղեգիր, հետագայում թևածեց աշխարհի տարբեր բեմերից: «Այդ երգը երկու առումով հիշարժան է իմ կյանքում,- կխոստովանի Ա.Պետրոսյանը:- Առաջինը, որ անձամբ մարշալ Բաղդամյանի, օպերային թատրոնի լեփ-լեցուն դահլիճի որոտընդոստ ծափերի տակ երեք անգամ երգը կրկնելուց հետո ինձ անդրանիկ պատվավոր կոչումը շնորհվեց՝ հանրապետության վաստակավոր արտիստ, և երկրորդ, որ այսօր նույն դահլիճի կամերային տակ ինձ շնորհ է արվում Մեծ հաղթանակի փառապանծ 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի գեղարվեստական բաժնում, արդեն 84-ամյա հասակում, նորից հանդես գալու այդ ծանր ժամանակները բնութագրող հիասքանչ երգի կատարմամբ: Եվ այս առիթով, օգտվելով ընձեռված պատեհությունից, ուզում եմ տարիների հեռվից հիշած լինել բոլոր-բոլորին, ովքեր շունչ ու ոգի տվին այդ երգին, ովքեր ունկնդրեցին, վշտացան, տոկացին ու վայելեցին հաղթանակի բերկրանքը, ովքեր, ավաղ, բախտ չունեցան տուն դառնալ կրկին ու համբույրով կաթոգին սփռվել մայրերի հոգին... Փառք ու պատիվ ողջերին, հավերժ հիշատակ՝ զնացողաց...»<sup>45</sup>:

43 Գозенпуд А. Спектакль о подвиге народа, “Смена”, Ленинград, 24 июня, 1956.

44 Торжество нерушимого братства. Гастроли ереванских гостей начались оперой “Давид-Бек”, “Вечерний Тбилиси”, 1 июня, 1963.

45 Ա.Պետրոսյանի անձնական արխիվ:

«Մարտիկի երգը» մեծ ժողովրդականություն վայելեց պատերազմի տարիներին և պատերազմից հետո՝ մինչ օրս: «Հիշում եմ, Մարշալ Բաղրամյանի և Անաստաս Միկոյանի Հայաստան պաշտոնական այցերի առթիվ տեղի ունեցող «գալա» համերգների ժամանակ նրանց միակ ու անփոփոխ ցանկությունը Ավագ Պետրոսյանի կատարմամբ «Մարտիկի երգը» և «Բարձր սարերը» լսելն էր: Ու ամեն անգամ արցունքի կաթիլները հոսում էին Բաղրամյանի այտերով: Հիշում եմ՝ Անաստաս Միկոյանի այցերից մեկի ժամանակ հայրս հիվանդ էր, բարձր ջերմություն ուներ և անկարող էր բեմ դուրս գալ: Չանգահարեց Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Չարոբյանը և խնդրեց չմերժել՝ բառացի կրկնելով Անաստաս Միկոյանի խոսքը. «Միմիայն Ավագի «Բարձր սարերն» եմ ուզում լսել»: Հասանք թատրոն: Արիան երգեց, և բեմի ետևում ընկավ ուշագնաց»<sup>46</sup>:

Իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում Ա. Պետրոսյանը մեծ սեր հանդես բերեց դեպի ժողովրդական երգը: Առանձնահատուկ ջերմությամբ էր կատարում հայ ժողովրդական և գուսանական երգերը՝ դառնալով դրանց անգուգական մեկնաբանը: Իսկ Սայաթ-Նովայի երգերը (այդ թվում՝ «Յիս քու դիմեթն չիմ գիդի») կատարում էր մեծ հուզմունքով: Երգչի համոզմունքն էր, որ «Սայաթ-Նովան հրաշք է, անկրկնելի է... Դարավոր մեր գուսանական արվեստը եկավ ու ծովացավ Սայաթ-Նովայի հոգում, ծովացավ, գուլավեց, դարձավ մեր ժողովրդի հոգու կարկաչող աղբյուրը, որ դարերի հողվույթում հագեցնի սերունդների ծարավը»<sup>47</sup>:

Ա. Պետրոսյանը հայ երգարվեստը ներկայացրել է Խորհրդային Միության քաղաքներում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Տաշքենդում, Թբիլիսիում, Բաքվում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Հնդկաստանում և Ֆրանսիայում: Միրված երգիչը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Հայաստանի քաղաքներում, շրջկենտրոններում և գյուղերում՝ ամենուր տարածելով հայ երգը և վայելելով արվեստագետներից քչերին վիճակվող համաժողովրդական ճանաչում ու սեր: Բացառիկ երկարակեցությամբ է առանձնանում Ա. Պետրոսյանի անցած ուղին: Երգարվեստում քչերն են պահպանել իրենց կատարողական ակտիվությունը պատկառելի տարիքում. այս տեսակետից Ա. Պետրոսյանը համեմատելի է Իվան Կոզլովսկու հետ, որը մահացավ 94 տարեկանում: 1991 թ. նոյեմբերին երգչի կրտսեր որդին՝ տաղանդավոր դիրիժոր և դաշնակահար Արա Պետրոսյանը, ով տասը տարեկան հասակից նվագակցել է սիրված երգչին, Փարիզ, Լիոն և Վալանս քաղաքներում կազմակերպում է հայ մշակույթի առաջին փառատոնը: «Փառատոնի պատվավոր նախագահը հռչակավոր կինոռեժիսոր Անրի Վերնոյն էր, աշխարհի 12 մշակութային ընկերություններ էին մասնակցում: Եվ բոլորին ապշեցրել էր, որ հայրիկիս ձայնը (արդեն 80-ին մոտ էր) այդպես անխաթար հնչում էր: Եվ Նիմա Գորյիակն էլ միշտ զարմանում էր. «Ավագ, ինչպե՞ս է, որ քո տարիքում ձայնդ նույնիսկ աննշան տատանումներ չի ունենում»: Ինչից էր դա՝ չգիտեմ: Բնատուր ձի՞րք, թե՞ ուսումնառության լավագույն դպրոցի արդյունք»<sup>48</sup>:

46 Պետրոսյան Արա, Նրա համար ամենաթանկը ժողովրդի սերն էր, «Վասն հայության», Եր., թիւ 9, 30.03.2003, էջ 12:

47 Խանյան Սուրբատ, Նրա սիրտն էր երգում ժողովրդի սիրով, անտիպ, Ա. Պետրոսյանի անձնական արխիվ:

48 Գանիելյան Կարինե, Բեմը իր տարերքն էր. օպերային արվեստի լեգենդը, «Ժամանակ», 3 նոյեմբերի, 2001:

## Վերջաբան

«Դավիթ Բեկ» օպերայի երրորդ գործողության չորրորդ պատկերում մահամերձ Սանթուրը կիսաձայն պատգամում է չարտասովել իր գերեզմանին, քանի որ ինքն ուրախ է իր կյանքը հայրենիքին տալու համար՝

**«Ազատ կի՛նի երկիրն իմ անգին, աշխարհը Հայաստան:  
Մեռնում եմ ուրախ, զոհված իմ երկրին, իմ հայրենիքին:  
Արցունք մի թափեք իմ գերեզմանին,  
Երգեցեք երգեր, հաղթության երգեր»<sup>49</sup>:**

Հաջորդում է Պաղտասար Դավիթի «Ի նրնջմանեդ արքայական»-ի հիման վրա գրված ռեքվիեմը՝ Tempo di marcia funebre.

**«Ապրի հավերժ մեր սրտերում,  
Անմահ հերոս մեր հայրենիքի»<sup>50</sup>:**

Նկատենք, որ այս խմբերգը հնչել էր օպերայի առաջին գործողության առաջին պատկերում՝ «Տեսարան լեռներում», բայց այլ տեքստով՝

**«Ապրի հավերժ մեր սրտերում  
Անմահ երկիր, հզոր և անհաղթ»<sup>51</sup>:**

Այսպիսով՝ Սանթուրը նույնանում է հայրենիքի գաղափարի հետ և անմահանում... Գիշտ այդպես էլ անմահացավ Ա.Պետրոսյանը՝ կյանքից հեռանալով 2000 թվականի նոյեմբերի 5-ին: Նա իր ստեղծագործական ողջ կյանքում ծառայեց հայրենիքին, անմնացորդ կերպով նվիրվեց հարազատ ժողովրդին ու իր կենաց օրոք կառուցեց իր հուշարձանը:

Ականավոր երգչի՝ Ա.Պետրոսյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը վառ օրինակ է յուրաքանչյուր հայ արվեստագետի համար, ով ստանձնել է իր արվեստով հարազատ ժողովրդին ծառայելու առաքելությունը:

Summery

### AVAG PETROSYAN, STROKES OF A PORTRAIT

On the occasion of the 100<sup>th</sup> anniversary of the birth of a prominent opera singer

Anna G. Asatryan

One of the central figures in 20th century Armenian music, tenor Avag Petrosyan (tenore di forza) was one of the most distinguished representatives of the Soviet-Armenian vocal school. He was a unique and profoundly national artist, a singer and dramatic artist harmonically combined, whose created characters were distinguished by the unification of his amazing vocal and stage presence.

A. Petrosyan became known for the heroic roles he played in Armenian operas:

49 **Տիգրանյան Արմեն**, Դավիթ-Բեկ, օպերա երեք գործողությամբ, վեց պատկերով, լիբրետո Արմեն Տիգրանյանի, կլավիր, եր., 1981, էջ 304-305:

50 Նույն տեղում, էջ 305:

51 Նույն տեղում, էջ 33:

*Saro* in A. Tigranyan's "Anush," *Santur* in A. Tigranyan's "Davit Bek," *Ashugh* and *Sheikh* in A. Spendyaryan's "Almast," *Karo* in A. Babayev's "Artsvaberd," *Tirit* in T. Chukhajyan's "Arshak III," *Vahan* in H. Stepanyan's "Heroine," *Sos* in V. Tigranyan's "Sos and Varditer," *Seyran* in L. Kojayeyatyan's "Namus." His roles as *Saro* and *Santur* ("Anush," "Davit Bek") became the masterpieces in his artistic repertoire.

A. Petrosyan was also a celebrated chamber singer, he was the delicate interpreter of Armenian, Russian and Western European classical songs, and was an unrivalled performer of Armenian traditional and folk songs.

A. Petrosyan presented Armenian musical culture to the cities of the Soviet Union, Moscow, St. Petersburg, Kiev, Tashkend, Tbilisi, Baku and also to the United States, Canada, India and France. Everywhere he went he spread Armenian song and received nationwide acclaim that very few artists have been able to garner.

ՄԱՍԿԻՆԻՅԵ

Դ (Ժ) քապի, թիվ 2 (38) ապրիլ-հունիս, 2012

ՎԵՄ համահայկական հանդես